**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 09.07.2019թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ՍՑ-LO-2019/81

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9724-2019 գրությամբ «Վիռանա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 07.06.2019թ. թիվ /18-2/27568-2019 գրության հիման վրա, 11.06.2019թ. «Վիռանա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

**2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 07.06.2019թ. թիվ /18-2/27568-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ՎԻՌԱՆԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 47-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 31.05.2019թ-ին «ՎԻՌԱՆԱ» ՍՊԸ-ն ծանուցվել է ներկայացնել հայտերի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել և ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն հայտը մերժվել է:»:*

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վիռանա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

**3. <u>«Վիռանա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 12.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Վիռանա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9724-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

**4. <u>ՍՑ-LO-2019/81 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար գրենական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Վիռանա» ՍՊԸ-ն:

«Վիռանա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ինչպես նաև նույն հավելվածով «Վիռանա» ՍՊԸ-ն՝

1) հայտնել և հավաստել է, որ «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված՝ «Վիռանա» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «Վիռանա» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Վիռանա» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ):

Գնահատող հանձնաժողովի 30.05.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վիռանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 համապատասխան էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չէ:

Նույն արձանագրության հիման վրա, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Վիռանա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը, «Վիռանա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում ներկայացված Հավելված 2.1-ը (իրական շահառուների մասին տվյալները) չշտկելու հիմքով:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9724-2019 գրությամբ «Վիռանա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի.

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար գրենական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած Վիռանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1-ն հաստատված չի եղել համապատասխան էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Նույն արձանագրության հիման վրա, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Վիռանա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ

աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը, «Վիռանա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում ներկայացված Հավելված 2.1-ը (իրական շահառուների մասին տվյալները) չշտկելու հիմքով:

«Վիռանա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ինչպես նաև նույն հավելվածով «Վիռանա» ՍՊԸ-ն՝

1) հայտնել և հավաստել է, որ «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված՝ «Վիռանա» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «Վիռանա» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Վիռանա» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վիռանա» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով արձանագրված անհամապատասխանությունների չտկումը, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26/9724-2019 գրությամբ «Վիռանա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Վիռանա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**